# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

<<ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>

**Հոդված 1.** <<Ազգային անվտանգության մարմինների մասին>> Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 28-ի ՀՕ-294 օրենքի (այսուհետ` Օրենք) 4-րդ հոդվածի`

1) 1-ին մասից <<Հայաստանի Հանրապետության Նախագահը,>> բառերը հանել,

2) 2-րդ մասում <<Նախագահը>> բառը փոխարինել <<վարչապետը>> բառով:

**Հոդված 2**. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի`

1) <<ա>> կետում <<Հայաստանի Հանրապետության Նախագահին և Հայաստանի Հանրապետության կառավարություն ու նրանց>> բառերը փոխարինել <<Հայաստանի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության վարչապետին, ինչպես նաև վերջինիս>> բառերով,

2) <<ժէ>> կետում <<Նախագահին>> բառը փոխարինել <<նախագահին, վարչապետին>> բառերով:

**Հոդված 3**. Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասում <<Հայաստանի Հանրա-պետության Նախագահը և Հայաստանի Հանրապետության կառավարությունը>> բառերը փոխարինել <<Հայաստանի Հանրապետության կառավարությունն ու վարչապետը>> բառերով:

**Հոդված 4**. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ և 6-րդ գլուխներն ուժի մեջ մտնելու օրվանից: